ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 40 78 36, foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

29.06.2018թ.
336-ի 4

Երևանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Հայտնում ենք, որ 2018թ.-ի հունիսի 9-ին Սոնա Գևորգյանը տեղեկություն ստանալու հարցմամբ (կից ներկայացնում ենք հարցումը) դիմել է քաղաքապետարան, սակայն քաղաքապետարանը չի պատասխանել հարցմանը:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Արդյոք կարե՞լի է առևտրական գործունեություն ծավալել Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտի տարածքում:
2. Եթե այո, ապա ո՞ր կազմակերպություններն են ծավալում և ի՞նչ նպատակով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ
Շուշան Դոյդոյան